

«13» օգոստոսի 2024թ.  
ք. Եղվարդ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1**

**ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՄԱՆԴԱՏԸ  
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՑՈՒՑԱԿԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՐԴ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Նաիրի համայնքի ղեկավարի 2024 թվականի օգոստոսի «05»-ի «Նաիրի համայնքի ավագանու անդամ Նարեկ Անտոնյանի՝ ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին» թիվ 1 արձանագրությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով՝ թիվ 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Մ Է .**

Նաիրի համայնքի ավագանու «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվում է «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Հայկ Վարդանի Գևորգյանին:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Կոնդյան

Նախագահի տեղակալ՝

Տ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Մ. Միրզոյան

Անդամներ



Ա. Հովհաննիսյան

Տ. Եգորյան

Մ. Սահակյան

Ա. Հովհաննիսյան